## *ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1*

**2026ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N ՖԻ-ԳՀԱՊՁԲ-26/02 -1ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «09» «հունիսի» 2026թ.

ՀՀ Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ ՊՈԱԿ--ը ի դեմս տնօրեն Ն. Այվազյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նովալաբ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Մ. Գինովյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով կողմերի միջև 2026թվականի ապրիլի 30-ին կնքված **N ՖԻ-ԳՀԱՊՁԲ-26/02-1 ծածկագրով գնման պայմանագրի** (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ, 8.8-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «**Գնումների գործընթացի կազմակերպման**» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ՝

1.1 Պայմանագրի հավելված 1-ով սահմանված մատակարարման ժամկետի «42 օրացուցային օր, բայց ոչ ուշ քան 2026թվականի հունիսի 10-ը» բառերը փոխարինել «**մինչև 2026 թվականի հուլիսի 10-ը ներառյալ**» բառերով:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 30.04.2026թվականին կնքված ապրանքների մատակարարման **N ՖԻ-ԳՀԱՊՁԲ-26/02-1** Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

*2.4* Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 2 հավելվածը համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

**ԳՆՈՐԴ**

**« ՀՀ Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ » ՊՈԱԿ**
**ք. Երևան Օրբելի 22**
**ՀՎՀՀ՝ 00008543**
**ՀՀ ֆին. նախ, գործ. վարչություն**
**Հ/Հ՝ 900018005620**
**Տնօրեն՝ Ն. Այվազյան**

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

**«ՆՈՎԱԼԱԲ» ՍՊԸ**
**ՀՀ, ք. Երևան, Հրաչյա Քոչար փողոց, շ.147/1, բն.41**
**ՀՎՀՀ՝ 08276919**
**Բանկ՝ ԱյԴի Բանկ ՓԲԸ**
**Հ/Հ՝ 11817091427900**
**Տնօրեն՝ Մ. Գինովյան**

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ